

## ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

### Տաթևիկ Գևորգյան

*ԱրՊՀ իրավունքի ամբիոնի դասախոսու*

Մեկ անձի կողմից մի քանի հանցավոր արարքների կատարումը հատուկ ուշադրություն է պահանջում, քանի որ յուրաքանչյուր նոր հանցագործությամբ աճում է հասարակությանը պատճառվող վնասի չափը: Նման հանցավոր դրսևորումներին հակազդելու համար է հանցագործությունների բազմակիության գիտական և գործնական մշակումը: Ո՛չ գործող, ո՛չ էլ նախկին քրեական օրենսդրությունը չի տվել հանցագործությունների բազմակիության հասկացության սահմանումը: Պետք է նաև նշել, որ մինչ այժմ այս հարցի շուրջ միանշանակ կարծիք չի ձևավորվել: Այսպես, Ն. Գ. Կեդրիկովը հանցագործությունների բազմակիությունը բնութագրում է որպես «անձի կողմից երկու և ավելի հանցանքների կատարում»<sup>1</sup>:

Ա. Ա. Տեր-Ակոպովը նշում է, որ «հանցագործությունների բազմակիություն նշանակում է մեկ անձի կողմից երկու և ավելի հանցանքների կատարումը, որոնց համար դատվածությունը չի հանվել և չի մարվել»<sup>2</sup>:

Վ. Ի. Պինչուկը գրում է, որ հանցագործությունների բազմակիություն ասելով պետք է հասկանալ մեկ անձի կողմից երկու և ավելի հանցանքների կատարումը, որոնցից յուրաքանչյուրը, առանձին վերցրած, ինքնուրույն հանցակազմ է ներկայացնում այն պայմանով, որ անձը չի ազատվել քրեական պատասխանատվությունից օրենքով սահմանված կարգով (օրինակ՝ վաղեմության ժամկետները չեն անցել)<sup>3</sup>:

Այդ կարծիքին են նաև Լ. Լ. Կրուզիկովը<sup>4</sup> և Ի. Բ. Աղևալը<sup>5</sup>:

Մեր կարծիքով, առավել հաջողված է Զ. Ա. Նեզնամովայի կողմից առաջարկվող սահմանումը, որում նշվում են բազմակիության բոլոր հատկանիշները: Ըստ նրա՝ հանցագործությունների բազմակիությունը միևնույն անձի կողմից քրեական օրենքով նախատեսված մի քանի իրավախախտումների համակցություն է՝ պայմանով, որ սուբյեկտի յուրաքանչյուր արարք իրենից ինքնուրույն հանցակազմ է ներկայացնում, պահպանում է քրեաիրավական նշանակությունը և չունի դատավարական խոչընդոտներ՝ քրեական հետապնդում իրականացնելու համար<sup>6</sup>:

Հանցագործությունների բազմակիության՝ որպես քրեական իրավունքի ինստիտուտի և սոցիալ-իրավական երևույթի քննարկումը հնարավորություն է տալիս առանձնացնելու հանցագործությունների բազմակիության հիմնական գծերը. 1. միևնույն անձի կողմից երկու և ավելի հանցանքների կատարումը, որոնցից յուրաքանչյուրը իրենից ինքնուրույն հանցակազմ է ներկայացնում, 2. բազմակիությունը կարող է կազմավորվել ինչպես առանձին ավարտված հանցագործություններից, այնպես էլ հանցագործությունների նախապատրաստությունից և հանցավործից, ո-

<sup>1</sup> Տե՛ս **Кадников Н. Г.** Квалификация преступлений и вопросы судебного толкования. Теория и практика. М., 2009, էջ 46:

<sup>2</sup> **Тер-Акопов А.А.** Преступления и проблемы нефизической причинности в уголовном праве. М., 2003, էջ 104:

<sup>3</sup> Տե՛ս **Пинчук В. И.** Множественность преступлений. Учебник. Санкт-Петербург, 1999, էջ 3:

<sup>4</sup> Տե՛ս Уголовное право России. Часть общая. Под ред. Л. Л. Кругликова- М., 1999, էջ 314:

<sup>5</sup> Տե՛ս **Агаев И. Б.** Понятие преступлений // Уголовное право. 2003, N 3, էջ, 4:

<sup>6</sup> Տե՛ս Уголовное право. Общая часть. И. Я. Козаченко. З. А. Незнамова. М., 1997, էջ 296:

րոնք կարող են լինել ոչ միայն կատարողի, այլ նաև կազմակերպչի, դրոշի, օժանդակողի արարքներ, 3. բազմակիությունը բացակայում է այն դեպքում, երբ կատարված երկու արարքներից մեկի կապակցությամբ առկա են քրեաիրավական հետևանքները բացառող հանգամանքներ. անձն ազատվել է քրեական պատասխանատվությունից քրեական օրենսգրքով սահմանված կարգով, հանվել կամ մարվել է դատվածությունը:

Այսպիսով, կարելի է ասել, որ հանցագործությունների բազմակիություն է միևնույն անձի կողմից երկու կամ ավելի ինքնուրույն հանցակազմ պարունակող արարքների կատարումը, եթե դրանց համար չեն անցել քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետները, անձը չի ազատվել քրեական պատասխանատվությունից քրեական օրենսգրքով սահմանված կարգով կամ չի մարվել կամ հանվել դատվածությունը<sup>1</sup>:

Հանցագործության բազմակիության տարբերակումը մեկ ամբողջական հանցագործությունից տեսական և գործնական շատ կարևոր նշանակություն ունի: Հանցագործությունների բազմակիությունը, այսինքն՝ անձի կողմից մի քանի հանցագործությունների կատարումը, առաջացնում է իրավական մի շարք յուրահատուկ հարցեր, որոնք հարկ է լինում լուծել բազմակիության քրեաիրավական որակման ժամանակ<sup>2</sup>:

Հանցավոր արարքի ճիշտ որակման համար կարևոր է պարզել՝ կոնկրետ դեպքում առկա է մեկ միասնական (բարդ) հանցագործություն, թե հանցագործությունների բազմակիություն: Այս հարցի շուրջ նույնպես տարբեր են կարծիքները: Հեղինակների մի մասը գտնում է, որ մեկ միասնական է այն հանցագործությունը, որն արտահայտվում է առանձին կամային ակտով<sup>3</sup>, մյուս մասը մեկ ամբողջական հանցագործություն է համարում վարքագծի մի քանի միատեսակ ակտերը, որոնք ուղղված են մեկ նպատակի իրականացմանը:

Վ. Ն. Կուդրյավցևը մեկ ամբողջական հանցագործությունը բնութագրում է այսպես. իրական կյանքում կատարվում են միաժամանակ, ունեն օբյեկտիվ և սուբյեկտիվ ընդհանուր հատկանիշներ, փոխկապված են միմյանց հետ և իրենց հակահասարակական էությամբ բնութագրական են որոշակի կատեգորիայի անձանց վարքագծին<sup>4</sup>:

Այսինքն՝ մեկ ամբողջական հանցագործություն է համարվում այն արարքը, որի հատկանիշները ընդգրկվում են մեկ հանցակազմում: Սակայն նման բնորոշումը բավարար է միայն պարզ հանցագործությունների համար, երբ հանցագործությունը կազմված է մեկ արարքից կամ մեկ արարքից և մեկ հետևանքից: Խնդիրը դժվարանում է բարդ հանցագործությունների դեպքում, երբ անհրաժեշտ է պարզել՝ կատարվածի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների ամբողջությունը ընդգրկվում է մեկ հանցակազմում, թե ոչ:

Ձևական հանցակազմով պարզ հանցագործությունը ոտնձգում է մեկ օբյեկտի դեմ, կազմված է մեկ արարքից (գործողություն կամ անգործություն) և կատարվում է մեղքի մեկ ձևով:

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (չորրորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով). /Ս. Առաքելյան, Ա. Պաբուզյան, Հ. Խաչիկյան և ուրիշ., Եր., 2009, էջ 304:

<sup>2</sup> Տե՛ս **Գրիգորյան Մ. Վ.** Քրեական իրավունք, Ընդհանուր մաս, Երևան, 2007, էջ 331:

<sup>3</sup> Տե՛ս **Герцезон А. А.** Квалификации преступлений. М., 1947, էջ 15:

<sup>4</sup> Постановление Пленума Верховного Суда РФ N29

Նյութական հանցակազմ ունեցող պարզ հանցագործությունը ոտնձգում է քրեաիրավական պաշտպանության տակ գտնվող մեկ օբյեկտի դեմ, կազմված է մեկ արարքից և առաջացնում է մեկ հանցավոր հետևանք, կատարվում է մեղքի մեկ ձևով:

Բարդ հանցագործությունը, բացի նշվածներից, պարունակում է լրացուցիչ պարտադիր հատկանիշներ:

Տարբերում են բարդ հանցագործության հետևյալ տեսակները՝ 1. շարունակվող հանցագործություն, 2. տևող հանցագործություն, 3. բաղկացական կամ բաղադրյալ հանցագործություն, 4. հանցագործություն երկընտրելի գործողություններով կամ անգործություններով, 5. հանցագործություն լրացուցիչ ծանր հետևանքներով, 6. մի քանի օբյեկտներով կամ բազմօբյեկտ հանցագործություն, 7. մեղքի երկու ձևով կատարվող հանցագործություն, 8. հանցագործություն, որի օբյեկտիվ կողմը կազմվում է արարքի կրկնակի կատարմամբ:

**Շարունակվող հանցագործություն:** Շարունակվող է համարվում այն հանցագործությունը, որը կազմված է հաջորդաբար կատարվող միաբնույթ հանցավոր արարքներից, որոնք ուղղված են ընդհանուր նպատակի իրականացմանը և միավորված են մեկ միասնական դիտավորությամբ:

Կարելի է առանձնացնել շարունակվող հանցագործության հետևյալ հատկանիշները. 1) անձը կատարում է մի քանի հանցավոր արարքներ, 2) շարունակվող հանցագործություն կազմող արարքները կատարվում են հաջորդաբար, 3) կատարվող արարքները համարվում են իրավաբանորեն նույնաբնույթ, այսինքն՝ ուղղված են մեկ օբյեկտի դեմ, սակայն փաստական հատկանիշներով կարող են տարբերվել, 4) արարքները միավորված են մեկ նպատակով և այդ պատճառով հանդես են գալիս որպես ամբողջի մասեր, 5) արարքները, որոնք կազմում են շարունակվող հանցագործությունը, կարող են համարվել ինքնուրույն ավարտված հանցագործություն: Բայց նույնիսկ այն դեպքում, երբ առանձին դրվագներն իրենք իրենցով հանցավոր են, դրանք չեն կարող ստանալ ինքնուրույն քրեաիրավական գնահատական, քանի որ համարվում են հանցավորի միասնական հանցավոր դիտավորության իրականացման «փուլեր»: Եթե հանցավորն իր կամքից անկախ հանգամանքներով չի հասնում իր վերջնական նպատակին, ապա արարքը որակվում է ավարտված հանցավորի:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում այն դեպքերը, երբ միասնական դիտավորությամբ կատարվում է առանձնապես խոշոր չափերի հափշտակություն տարբեր եղանակներով (գողություն, կողոպուտ, ավազակություն): Տվյալ դեպքում արարքները պետք է դիտել որպես շարունակվող հանցագործություն և որակել՝ նկատի ունենալով անձի դիտավորությունը կատարված արարքներից ամենավտանգավորը նախատեսող հոդվածով: Կարծիք կա նաև, որ եթե հափշտակությունները կատարվել են տարբեր եղանակներով, ապա դրանց չափերը չպետք է գումարել: Սակայն մենք գտնում ենք, որ մեկ միասնական դիտավորությամբ կատարվող և մեկ եղանակով սկսված հափշտակության դեպքում, երբ այն վերածվում է այլ եղանակով հափշտակության, հափշտակության չափերը կարելի է գումարել: Օրինակ՝ անձը դիտավորություն ունի բնակարանից գողանալու առանձնապես խոշոր չափերի հասնող գույք, դրա մի մասը գողությամբ դուրս է բերում, վերադառնում է մնացած մասը գողանալու: Հանդիպելով տանտիրոջը, նրա կյանքի համար վտանգավոր բռնություն գործադրելով՝ ավազակությամբ հափշտակում է գույքի մնացած մասը: Տվյալ դեպքում արարքը պետք է որակել առանձնապես խոշոր չափերի գույք-

քի հափշտակություն՝ ավագակության եղանակով, քանի որ գողությունը միասնական դիտավորությամբ հափշտակության բաղկացուցիչ մասն է եղել, որը կլանվում է նույն միասնական դիտավորությամբ հափշտակության բաղկացուցիչ մաս կազմող ավագակության կողմից:

Այսպիսով, շարունակվող է համարվում այն հանցագործությունը, որը կատարվում է իրավաբանորեն նույնաբնույթ արարքներով, որոնք, որպես կանոն, կատարվում են ոչ մեծ ժամանակային խզումով, միևնույն հանգամանքներում և միավորված են միասնական դիտավորությամբ:

**Տևող հանցագործություն:** Տևող հանցագործության բնորոշումը ո՛չ ՀՀ քրեական օրենսգրքում, ո՛չ էլ ԼՂՀ քրեական օրենսգրքում տրված չէ: Այն պարզաբանված է քրեական իրավունքի տեսության մեջ, համաձայն որի՝ տևող հանցագործություն է համարվում գործողությունը կամ անգործությունը, որն արտահայտվում է տևական ժամանակահատվածում անձի կողմից կոնկրետ հանցավոր արարքի հանցակազմի անընդմեջ կատարմամբ<sup>1</sup>:

Տևող հանցագործությունը սկսվում է գործողության (օրինակ՝ փախուստ ազատագրկման վայրից) կամ անգործության (օրինակ՝ պատիժը կրելուց խուսափելը) պահից և ավարտվում է կամ հանցավորի կողմից մեղայականով ներկայանալով, կամ իրավապահ մարմինների կողմից հանցագործի ձերբակալումով, կամ պարտականության վերացմամբ:

Տևող հանցագործությունը շարունակվող հանցագործությունից տարբերվում է նրանով, որ կատարվում է մեկ արարքով, որը տևում է երկար ժամանակ: Ընդ որում, օրենսդիրը որոշ տևող հանցագործությունների համար սահմանել է որոշակի ժամկետ, որի դեպքում այն կարող է համարվել հանցագործություն: Օրինակ՝ ԼՂՀ քրեական օրենսգրքի 179 հոդվածը պատասխանատվություն է սահմանում ծնողի կողմից երեխային կամ տասնութ տարին լրացած անաշխատունակ զավակին դատարանի վճռով ապրուստի միջոցներ վճարելուց երեք ամսից ավելի չարամտորեն խուսափելու համար: Իսկ 180 հոդվածը պատասխանատվություն է նախատեսում անաշխատունակ կամ նյութական օգնության կարիք ունեցող ծնողին դատարանի վճռով ապրուստի միջոցներ վճարելուց երեք ամսից ավելի չարամտորեն խուսափելու համար:

**Բաղկացական կամ բաղադրյալ հանցագործություն:** Բաղադրյալ կամ բաղկացական է համարվում այն հանցագործությունը, որը կազմված է տարաբնույթ արարքներից, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է ինքնուրույն հանցագործության հատկանիշներ: Նման հակաիրավական արարքներն օրենսդրի կողմից միավորվում են մեկ միասնական հանցագործության մեջ, քանի որ դրանք ուղղված են մեկ հանցավոր նպատակի իրականացմանը: Մեկ միասնական բաղկացական հանցագործությունը բնութագրվում է ավելի բարձր հասարակական վտանգավորությամբ, քանզի հանցակազմի մեջ մտնող յուրաքանչյուր արարք իրենից ներկայացնում է առանձին հանցագործություն: Եթե բաղադրյալ հանցագործության կազմի մեջ մտնող արարքներից յուրաքանչյուրը կատարվի մյուսներից զատ, ապա դրանք կորակվեն ինքնուրույն: Սակայն օրենսդիրը հաշվի է առել այդ արարքները միասին կատարելիս դրանց բարձր հանրային վտանգավորությունը և քրեական օրենսգր-

<sup>1</sup> Российское уголовное право. Общая часть. М., 2007, էջ 281:

քով սահմանել ավելի խիստ պատասխանատվություն<sup>1</sup>:

Բաղադրյալ հանցագործության հանցակազմերը օրենքում կառուցվել են տարբեր կերպ: Մի դեպքում հանրորեն վտանգավոր երկու ինքնուրույն արարքները միավորվում են և ձևավորում նոր հանցագործություն: Օրինակ, ավազակային հարձակումը կազմված է կողոպուտից և անձի դեմ ուղղված հանցագործությունից: Երկրորդ դեպքում մի քանի ինքնուրույն հանցագործություններ մտնում են մեկ այլ հանցագործության կառուցվածքի մեջ՝ որպես հանցակազմի պարտադիր հատկանիշ, օրինակ՝ խուլիգանությունը, որտեղ քաղաքացիների նկատմամբ բռնությունը ձևավորում է անձի դեմ ուղղված հանցագործություն: Սակայն խուլիգանության հանցակազմի մեջ դրանք նախատեսված են որպես հանցակազմի պարտադիր հատկանիշներ և այդ պատճառով էլ կորցնում են իրենց ինքնուրույն քրեաիրավական նշանակությունը: Մեկ այլ դեպքում քրեական օրենսգրքով նախատեսված մեկ հանցագործությունը զուգորդվում է մեկ այլ հանցագործության հետ, մեկ այլ դեպքում էլ հանրորեն վտանգավոր արարքը կարող է համարվել մեկ այլ հանցագործության ծանրացնող հանգամանք: Այսինքն՝ անկախ արարքի ձևավորման եղանակից՝ բաղկացական կամ բաղադրյալ հանցագործության հանցակազմի մեջ կլանված արարքները կորցնում են իրենց քրեաիրավական ինքնուրույնությունը և համարվում են բաղադրյալ հանցագործության տարրեր:

**Հանցագործություն՝ երկրնտրելի գործողություններով կամ անգործություններով:** Բարդ հանցագործության այս տեսակը իրավաբանական գրականության մեջ անվանում են նաև այլընտրանքային հանցակազմերով հանցագործություն:

Այս դեպքում հողվածի դիսպոզիցիայում թվարկվում են որոշ արարքներ, որոնցից յուրաքանչյուրի կատարումն արդեն բավարար է հանցագործությունն ավարտված ճանաչելու համար: Միաժամանակ հողվածի դիսպոզիցիայում նշված բոլոր արարքների կատարումը նույնպես ձևավորում է մեկ հանցագործություն: Հողվածի դիսպոզիցիայում թվարկված արարքների քանակը չի ազդում արարքի որակման վրա, սակայն կարող է հաշվի առնվել պատիժ նշանակելիս: Երկրնտրելի արարքներով հանցագործությունները հանցագործությունների համակցություն չեն:

**Հանցագործություն՝ լրացուցիչ ծանր հետևանքներով:** Տվյալ դեպքում դիտավորյալ հանցագործության հետևանքով անզգուշությամբ առաջանում են ավելի ծանր հետևանքներ: Օրինակ՝ դիտավորյալ առողջությանը ծանր վնաս պատճառելը, որն անզգուշությամբ առաջացնում է տուժողի մահ: Այս հանցագործությունը կարծես կազմված է երկու ինքնուրույն հանցագործություններից՝ դիտավորյալ առողջությանը ծանր վնաս պատճառելուց և անզգուշությամբ մահ պատճառելուց: Սակայն այդ արարքներն իրենց ներքին միասնության պատճառով օրենքում բնորոշվում են որպես մեկ միասնական բարդ հանցագործություն:

**Մի քանի օբյեկտներով (բազմօբյեկտ) հանցագործություններ:** Ինչպես գիտենք, որոշ հանցագործություններ ոտնձգում են ոչ թե մեկ, այլ քրեաիրավական պաշտպանության տակ գտնվող մի քանի օբյեկտների դեմ: Այս դեպքում ոտնձգություն է կատարվում երկու անմիջական օբյեկտների դեմ, սակայն օբյեկտներից մեկը համարվում է հիմնական, իսկ երկրորդը՝ լրացուցիչ (լրացուցիչ պարտադիր): Օրինակ՝ ավազակության հանցակազմի մեջ հիմնական օբյեկտի դեմում հանդես է գալիս սեփականությունը: Հենց այդ պատճառով էլ ավազակությունը դասվում է սեփական-

<sup>1</sup> Ст'у Комментарий к уголовному кодексу Российской Федерации, 4-е издание, отв. ред. Первый заместитель Министра внутренних дел РФ А. А. Чекалин, Юрист, М., 2007, էջ 71:

նության դեմ ուղղված հանցագործությունների թվին: Սակայն ավագակառությունը միշտ ստեղծում է անձի առողջությանը վնաս պատճառելու իրական սպառնալիք:

Բացի հիմնական և լրացուցիչ օբյեկտներից՝ առանձնացվում է նաև լրացուցիչ ոչ պարտադիր օբյեկտը, որը տուժում է այս կամ այն հանցագործությունից ոչ միշտ, այլ որոշ դեպքերում:

**Մեղքի երկու ձևով կատարվող հանցագործություններ:** Բարդ հանցագործության այս տեսակը համարվում է լրացուցիչ ծանր հետևանքներով հանցագործության տարատեսակ: Մեղքի երկու ձևով հանցագործություն առկա է այն դեպքում, երբ դիտավորյալ հանցագործություն կատարելու պատճառով առաջանում են այնպիսի հետևանքներ, որոնք չեն մտնում հանցավորի դիտավորության մեջ, և որոնց նկատմամբ անձը դրսևորում է անզգուշություն՝ ինքնավստահության կամ անփութության ձևով: Այդ մասին նշված է նաև քրեական օրենսգրքում, որի ձևակերպումից բխում է, որ մեղքի երկու ձևով կարող են կատարվել միայն նյութական հանցակազմերով հանցագործությունները: Այսպես, հրկիզման ժամանակ հանցավորը դիտավորություն է դրսևորում ուրիշի գույքի ոչնչացման կամ վնասման (մոտակա հետևանք) նկատմամբ և անզգուշություն՝ անձի մահվան (հեռավոր հետևանք) նկատմամբ:

Մեղքի երկու ձևով կատարված հանցագործության պատճառով ծանր հետևանքների առաջացումը կարող է նախատեսված չլինել որպես ինքնուրույն հանցագործություն: Դրա համար քրեական պատասխանատվություն կարող է սահմանվել միայն այն դեպքում, երբ դիտավորյալ գործողությունների և առաջացած հետևանքների միջև առկա է պատճառական կապ:

Ակնհայտ անարդարացի մեղադրական դատավճռի հետևանքով դատապարտյալի ինքնասպանությունը համարվում է մեղքի երկու ձևով կատարվող հանցագործության օրինակ, որտեղ ծանր հետևանքը՝ դատապարտյալի ինքնասպանությունը, չի համարվում ինքնուրույն հանցագործություն, սակայն առկա է պատճառական կապ ակնհայտ անարդար մեղադրական դատավճիռ կայացնելու և ինքնասպանության միջև<sup>1</sup>:

**Հանցագործություն, որի օբյեկտիվ կողմը կազմվում է արարքի կրկնակի կատարմամբ:** Տվյալ հանցագործությանը բնութագրական է այն, որ առկա է միայն այն դեպքում, երբ դիսպոզիցիայում նկարագրված արարքը կատարվում է կրկնակի անգամ: Օրինակ՝ ՌԴ քրեական օրենսգրքի 154 հոդվածը պատժելի է համարում անօրինական որդեգրումը, որը կատարվել է կրկնակի անգամ կամ շահադիտական դրդումներով:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 170 և 171 հոդվածները պատասխանատվություն են նախատեսում տասնութ տարին լրացած անձի կողմից երեխային պարբերաբար ոգելից խմիչքների օգտագործման, ուժեղ ներգործող կամ այլ թմրեցնող նյութերի ոչ բժշկական օգտագործման, պոռնկության, թափառաշրջիկության կամ մուրացկանության, պոռնոգրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելու համար:

Այսպիսով, քրեական գործերի քննության ընթացքում և հանցավորի նկատմամբ պատիժ նշանակելիս կարևորվում է բարդ հանցակազմերով հանցագործությունների ճիշտ որակման խնդիրը, քանի որ որակման ընթացքում թույլ տրված սխալը օբյեկտիվորեն կարող է հանգեցնել ոչ ճիշտ պատժի նշանակման: Խնդիրն այն է, որ մեկ ամբողջական բարդ հանցագործության ոչ ճիշտ որակման հետևանք-

<sup>1</sup> Ст' u Российское уголовное право. Общая часть. М., 2007, էջ 284:

քով այդ հանցագործությունը սխալմամբ կարող է բաժանվել մի քանի ոչ մեծ ծանրության հանցագործությունների և պատիժ նշանակվել հանցագործությունների համակցության կանոններին համապատասխան՝ կիրառելով պատիժների կլանման կանոնը, որի դեպքում պատիժն անհամեմատ մեղմ կարող է լինել:

Բարդ հանցագործության տարբերակումը հանցագործությունների բազմակիությունից հնարավոր է միայն քրեաիրավական նորմի բովանդակության խոր ուսումնասիրության պայմաններում: Ուստի օրենքի մեկնաբանությանը և հանցակազմի հատկանիշների խոր ուսումնասիրությանն անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել: Մասնավորապես իրավակիրառ մարմինների կողմից բարդ հանցակազմ ունեցող հանցագործությունների վերլուծությունը հնարավորություն կտա առավել հստակ լուծելու որակման հետ առնչվող խնդիրները:

Արարքի որակումը դժվարություն է ներկայացնում հատկապես այն դեպքում, երբ արարքը կատարվում է մի քանի դրվագներով, կարճ ժամանակահատվածում, ընդ որում՝ կատարված արարքները կամ կարող են դիտվել որպես ինքնուրույն հանցագործություններ, կամ որպես մեկ բաղադրյալ հանցագործության տարրեր: Օրինակ՝ անձը տուժողի առողջությանը պատճառում է կյանքի համար վտանգավոր վնաս, իսկ հետո վերցնում է գույքը: Ինչպե՞ս պետք է որակել արարքը տվյալ դեպքում. որպես անձի դեմ ուղղված հանցագործություն և կողոպուտ, թե՞ մեկ հանցագործություն՝ ավազակություն:

Տվյալ և նմանատիպ այլ դեպքերը պետք է որակել հետևյալ կանոնի համաձայն. եթե կատարված արարքները ունեն բավարար ընդհանուր օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշներ, կատարվում են միասնական դիտավորությամբ, միավորված են ընդհանուր նպատակով, կատարման ժամանակով, վայրով և ընդգրկված են քրեական օրենսգրքի հատուկ մասի մեկ հոդվածում, ապա որակվում են որպես մեկ ամբողջական բարդ հանցագործություն:

Վերը նշված օրինակում, եթե անձը տուժողի առողջությանը հասցնում է վնաս՝ գույքին տիրանալու նպատակով, ապա տուժողի առողջությանը վնաս պատճառելու և գույքը վերցնելու միջև նշված ընդհանրությունն առկա է, կատարվածը պետք է որակել որպես ավազակություն:

Սակայն կոնկրետ քրեական գործով որպեսզի որոշենք՝ առկա է մեկ, թե մի քանի հանցանք, անհրաժեշտ է ղեկավարվել տվյալ ոլորտում սահմանված որոշակի կանոններով, որոնք սահմանելու համար առաջին հերթին անհրաժեշտ է պարզել, թե ինչ դատողություններից ելնելով է օրենսդիրը այս կամ այն արարքը մեկ ամբողջական հանցագործություն համարել: Ինչու՞, օրինակ, խուլիզանությունը՝ զուգորդված իշխանության ներկայացուցչին դիմադրություն ցույց տալու հետ, դիտվում է որպես մեկ հանցագործություն, իսկ ավազակային հարձակումը՝ զուգորդված հանցագործին ձերբակալելու ժամանակ ոստիկանության աշխատակցին դիմադրություն ցույց տալու հետ՝ հանցագործությունների համակցություն: Ակնհայտ է, որ մեկ ամբողջական հանցագործության ձևական բնորոշումը չի կարող պատասխանել տվյալ հարցին: Անհրաժեշտ է պարզել, թե ինչ է թաքնված իրավական ձևի տակ, ինչպիսին են կատարված արարքի քրեաբանական և քրեաիրավական առանձնահատկությունները, որոնց հիման վրա այն համարվում է մեկ միասնական հանցագործություն:

Տեսության մեջ նշակվել են բարդ հանցագործությունների որակման որոշակի կանոններ, որոնք հնարավորություն կտան ստեղծելու բարդ հանցագործությունների գործերով միասնական դատական պրակտիկա: Ըստ այդ կանոնների՝ կատարված արարքը որակվում է որպես մեկ բարդ հանցագործություն, եթե՝

1. Մեկ արարքի հետևանքով մեկ օբյեկտի պատճառվում են մի քանի տարբեր հետևանքներ, օրինակ՝ անձը տուժողի առողջությանը ծանր վնաս պատճառելու նպատակով բարձրությունից հրում է ներքև, որի հետևանքով տուժողի առողջությանը պատճառվում են տարբեր աստիճանների վնասներ: Թեև այստեղ մեկ օբյեկտի տարբեր վնասներ են պատճառվում, սակայն արարքը պետք է որակել որպես մեկ հանցագործություն՝ հաշվի առնելով անձի դիտավորությունը:

2. Միևնույն հետևանքներն առաջանում են համարժեք օբյեկտների նկատմամբ, օրինակ՝ եթե հրազենի մեկ կրակոցով անզգուշությամբ առաջանում է երկու անձանց մահ, ապա թեկուզև առաջանում են երկու հանցավոր հետևանքներ երկու տարբեր անձանց նկատմամբ, սակայն արարքը որակվում է քրեական օրենսգրքի մեկ հոդվածով, քանի որ օբյեկտները համարժեք են<sup>1</sup>: Սակայն եթե հետևանքների բնույթը տարբեր է, այսինքն՝ մեկ անձի առողջությանը պատճառվում է միջին ծանրության վնաս, իսկ մյուսին՝ ծանր վնաս, կամ եթե միևնույն հանցավոր հետևանքներն առաջանում են ոչ համարժեք օբյեկտների նկատմամբ, ապա առկա է իդեալական համակցություն:

Այս պնդումը տեղին է, եթե չկա մեկ քրեաիրավական նորմ, որն ամբողջությամբ նախատեսում է տարբեր օբյեկտների նկատմամբ առաջացած հետևանքները: Օրինակ՝ եթե սպանությունը կատարվել է այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով, որի հետևանքով մի քանի անձանց առողջությանը պատճառվել են տարբեր աստիճանի վնասներ, ապա այստեղ իդեալական համակցություն առկա է, և կատարվածը պետք է որակել շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կատարված սպանություն: Սակայն այս հարցի վերաբերյալ կա նաև այլ մոտեցում: Հեղինակների մի մասը գտնում է, որ տյալ դեպքում փաստացի առաջացած հետևանքներին նույնպես պետք է տրվի քրեաիրավական գնահատական, և դրանք համակցությամբ պետք է որակել շատերի կյանքի համար վտանգավոր սպանություն, քանի որ փաստացի առաջացած հետևանքները դուրս են քննարկվող հանցակազմի շրջանակներից<sup>2</sup>:

3. Հանցավոր արարքով վնաս է պատճառվում այնպիսի օբյեկտների, որոնք միմյանց նկատմամբ գտնվում են ենթակայության հարաբերությունների մեջ, կամ դրանցից մեկը համարվում է մյուսի մասը: Օրինակ՝ համակցություն չի կարող առաջանալ այն դեպքում, երբ անձի առողջությանը պատճառվում է ծանր վնաս՝ նրան սպանելու համար: Չնայած առողջությանը դիտավորությամբ վնաս պատճառելը և սպանությունը նախատեսված են քրեական օրենսգրքի Հատուկ մասի տարբեր հոդվածներով՝ որպես ինքնուրույն հանցագործություններ, այնուամենայնիվ այդ հանցագործությունների օբյեկտները միմյանց նկատմամբ գտնվում են ենթակայության հարաբերությունների մեջ. սպանության օբյեկտն ընդգրկում է առողջությանը վնաս պատճառելու օբյեկտը՝ որպես սպանության կատարման անհրաժեշտ պայման: Իսկ եթե առողջությանը վնաս պատճառելը և սպանությունը կատարվում են թեկուզ մեկ արարքով, սակայն տարբեր անձանց նկատմամբ, ապա այստեղ առկա է իդեալական համակցություն, քանի որ մեկ անձի առողջությանը վնաս պատճառելը չի համարվում մեկ այլ անձի սպանության անհրաժեշտ պայման:

Բազմակիության տեսակների հարցը գիտության մեջ դրված է վաղուց: Սկզբնական շրջանում դրանք երեքն էին՝ հանցագործությունների կրկնակիություն, հանցագործությունների համակցություն և հանցագործությունների ռեցիդիվ:

<sup>1</sup> Տե՛ս Կудрявцев В. Н. Общая теория квалификации преступлений, М., 1972, էջ 280:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ քրեական իրավունք, Հատուկ մաս. Դասագիրք բուհերի համար, Եր., 2004, էջ 70:



Դատական պրակտիկայում հաճախ են հանդիպում այնպիսի դեպքեր, երբ անձը կատարում է երկու և ավելի հանցանքներ, մասնավորապես՝ կրկնում է միևնույն հանցագործությունը, կամ միաժամանակ կատարում է տարբեր հանցագործություններ, կամ մեկ արարքով կատարում է մի քանի ինքնուրույն հանցակազմ պարունակող հանցագործություններ, կամ անձի կողմից հանցագործություն է կատարվում այն ժամանակ, երբ նախորդ կատարածի համար դատվածությունը դեռևս մարված կամ հանված չէ: Ինչևէ, նման դեպքերը կարող են բազմազան լինել, սակայն կարևորն այն է, որ դրանք ստանան համապատասխան քրեաիրավական գնահատական՝ կապված դրանց որակման և պատիժ նշանակելու առանձնահատկությունների հետ:

Հանցագործությունների բազմակիության տեսակների առանձնացման վերաբերյալ կան տարբեր կարծիքներ:

Ինչպես գիտենք, օրենսդրական փոփոխություններով կրկնակիության ինստիտուտը հանվել է բազմակիության տեսակների շարքից (ՌԴ – ում՝ 2003թ., ՀՀ – ում՝ 2011թ., ԼՂՀ քրեական օրենսգիրքն ընդունվել է 2013թ., որտեղ ի սկզբանե կրկնակիությունը նախատեսված չէր), ինչը վեճերի տեղիք է տվել:

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի համաձայն՝ հանցագործությունների կրկնակիություն է համարվում քրեական օրենսգրքի Հատուկ մասի միևնույն հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը: Նույն հոդվածի երրորդ մասի համաձայն՝ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը կրկնակի է համարվում միայն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում: Որպես կանոն, հանցագործությունների կրկնակիությունն առկա է միևնույն հոդվածով նախատեսված հանցանքների կատարման դեպքում: Բացառիկ դեպքերում կրկնակիություն է համարվում քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով նախատեսված, սակայն միաբնույթ հանցանքների կատարումը:

1. Հանցագործությունների համակցություն է համարվում քրեական օրենսգրքով (տարբեր հոդվածներով կամ միևնույն հոդվածով կամ հոդվածի միևնույն կամ տարբեր մասերով կամ կետերով) նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը, որոնցից ոչ մեկի համար անձը դատապարտված չի եղել:

2. Այնպիսի մեկ գործողությունը կամ անգործությունը, որը պարունակում է Քրեական օրենսգրքի երկու կամ ավելի հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշներ:

Հանցագործությունների համակցությունը լինում է երկու տեսակի՝ իրական և իդեալական: Իրական համակցության դեպքում անձը կատարում է երկու կամ ավելի հանցագործություններ առանձին գործողություններով կամ անգործություններով: Իդեալական համակցությունը բնութագրվում է մեկ արարքի կատարմամբ, որով վնասվում են տարբեր օբյեկտներ, և առաջանում են տարբեր հետևանքներ: Այդ հետևանքներից յուրաքանչյուրը պետք է քրեական օրենսգրքով նախատեսված առանձին հանցագործության օբյեկտիվ կողմի հատկանիշ լինի, այլ ոչ թե կազմի ընդհանուրի և մասի հարաբերակցություն:

Հանցագործությունների ռեցիդիվ է համարվում դիտավորությամբ հանցանք կատարելն այն անձի կողմից, ով դատվածություն ունի նախկինում դիտավորությամբ կատարած հանցանքի համար: Ռեցիդիվի դեպքում, ինչպես և կրկնակիության կամ իրական համակցության ժամանակ, անձը կատարում է երկու կամ ավելի արարք, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է ինքնուրույն հանցակազմ, սակայն ռեցիդիվն ունի որոշակի առանձնահատկություններ, որոնցով տարբերվում է հան-

ցագործությունների բազմակիության մյուս տեսակներից:

Ինչպես երևում է քրեական օրենսգրքում ամրագրված հանցագործությունների համակցության, կրկնակիության և ռեցիդիվի ինստիտուտները կանոնակարգող նորմերի վերլուծությունից, ի տարբերություն կրկնակիության, որի դեպքում կարևոր է, թե նախկինում կատարած հանցագործության համար անձը դատապարտված եղել է, թե ոչ, ռեցիդիվի դեպքում պարտադիր է նախկինում կատարած հանցագործության համար դատվածություն ունենալը: Մինչդեռ համակցության դեպքում, ընդհակառակը, անձը չպետք է դատապարտված լինի: Այսինքն՝ հանցագործությունների համակցությունը և ռեցիդիվը իրարից սահմանազատելու դեպքում օրենքը հստակ չափանիշ է տալիս, այն է՝ դատվածությունը, իսկ հիշյալ ինստիտուտները կրկնակիությունից սահմանազատելու դեպքում չափանիշը հստակ է, քանի որ կրկնակիությունը կարող է լինել ինչպես դատվածության հետ կապված, այնպես էլ չկապված, կրկնակիություն կարող են առաջացնել ինչպես միևնույն հողվածով կամ հողվածի մասով նախատեսված հանցագործությունները, այնպես էլ տարբեր հողվածներով նախատեսված հանցագործություններ:

Ասվածից հետևում է, որ կրկնակիությունը համակցությունից և ռեցիդիվից սահմանազատելու հարցում օրենսդիրը անհետևողականություն էր դրսևորել և «կրկնակիությանը», բացի իր նեղ հատկանիշներից, օժտել էր նաև այնպիսի հատկանիշներով, որոնցով օժտված են նաև համակցությունը և ռեցիդիվը: Այսինքն՝ օրենսդրական ճանապարհով սահմանված էր այն հստակ սահմանը, որով հնարավոր կլինե՞ր տարանջատել ինքնուրույն քրեաիրավական երևույթները, քանի որ, ըստ էության, կրկնակիության և ռեցիդիվի բնորոշումներում սահմանված են միևնույն պայմանները: Այսպես՝ ՀՀ նախկին քր. օր.-ի 21 հոդվածի մեկնաբանությունից բխում է, որ հանցագործությունների կրկնակիություն առկա է նաև այն դեպքում, երբ կատարվել է երկու կամ ավելի հանցանք, եթե նախկինում կատարած հանցանքի համար դատվածությունը չի մարվել կամ չի հանվել: Մյուս կողմից հանցագործությունների ռեցիդիվը բնորոշող հողվածից բխում է, որ դատվածության հետ կապված կրկնակիության դեպքում արարքի որակման համար նշանակություն չունի՝ նախորդ դատվածությունը առաջացել է մինչև 18 տարեկանը կատարած հանցանքի համար, թե ոչ: Իսկ ռեցիդիվը բացառող հանգամանք է համարվում մինչև 18 տարեկանը կատարված հանցանքի համար դատվածությունը: Ստացվում է այնպես, որ նույն արարքը կատարած տարբեր անձինք անհավասար պայմանների մեջ են գտնվում:

Պրակտիկայում նախկինում կատարված գողության համար դատվածություն ունեցող անձի կողմից կրկին գողություն կատարելու դեպքում արարքը որակվում էր որպես կրկին կատարված գողություն, իսկ հանցագործության ռեցիդիվը հաշվի էր առնվում պատիժ նշանակելիս, ինչի արդյունքում նշանակված պատիժը լինում էր շատ ավելի խիստ: Պատժաչափերի նման էական տարբերությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ առաջին գողությունը հաշվի է առնվում երեք անգամ. առաջին անգամ այն հաշվի է առնվում անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար, երկրորդ անգամ այն հաշվի է առնվում երկրորդ անգամ կատարված գողությունը որպես կրկին անգամ որակելու համար (դատվածության հետ կապված կրկնակիություն), իսկ երրորդ անգամ հաշվի է առնվում պատիժ նշանակելիս՝ որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք (հանցանք կատարելու ռեցիդիվ): Նման խիստ գնահատականը դժվար թե արդարացի լինի:

Նույն իրավիճակը առաջանում է նաև դատվածության հետ չկապված կրկնակիության և դրա հետ զուգորդված համակցության որակման դեպքում: Այսպես, երբ

անձը կատարում է հասարակ գողության փորձ, որոշ ժամանակ անց կրկին կատարում է հասարակ գողություն, ապա երկրորդ անգամ կատարված գողությունը պրակտիկայում որակվում էր որպես կրկին անգամ կատարված, և բոլորը միասին որակվում էր հանցանքների համակցությամբ: Որակման նման կարգ առաջարկվում է նաև քրեական իրավունքի տեսության կողմից: Այս դեպքում պատիժը անարդարացիորեն խստանում է:

Ավելի անարդար իրավիճակ է ստեղծվում նույնաբնույթ հանցագործությունների կրկնակիության դեպքում: Օրինակ՝ եթե անձը կատարեր, ասենք, հինգ կողոպուտ, նրա արարքը պետք է որակվեր որպես կրկին անգամ կատարված կողոպուտ: Իսկ եթե անձը կատարեր մեկ գողություն, այնուհետև՝ կողոպուտ, ապա արարքը պետք է որակվեր որպես գողություն և կրկին անգամ կողոպուտ: Այսինքն՝ հինգ կողոպուտ կատարած անձը ավելի շահեկան վիճակում էր հայտնվում: Մինչդեռ ակնհայտ է, որ հինգ կողոպուտ կատարածը ավելի բարձր հանրային վտանգավորություն ունի, քան մեկ գողություն և մեկ կողոպուտ կատարածը:

Հանցանքը կրկնակիությամբ որակելիս առանձին-առանձին քրեաիրավական գնահատական չի տրվում կատարված արարքներին: Հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելու կանոնը ենթադրում է ինքնուրույն գնահատական կատարված հանցագործություններին: Ղա հնարավորություն է տալիս յուրաքանչյուր կատարված արարքի դեպքում կոնկրետ պատիժ նշանակել, ինչը չի կատարվում կրկնակիության դեպքում: Վերջինիս դեպքում բոլոր կատարված արարքների համար նշանակվում է մեկ պատիժ՝ սահմանված մեկ հոդվածով (հոդվածի մասով), ինչպես մեկ հանցագործության համար չնայած առկա է հանցագործությունների բազմակիություն:

Ղա համար էլ, մեր կարծիքով, օրենսդիրը արդարացիորեն նպատակահարմար գտավ իրաժարվել կրկնակիության ինստիտուտից, որը՝ 1. օբյեկտիվորեն չի կարող ապահովել հանցագործությունների բազմակիության գործառույթների իրականացումը<sup>1</sup>, 2. խնդիրներ է ստեղծում կրկնակիությունը համակցությունից և ռեցիդիվից տարբերելու հարցում<sup>2</sup>, 3. խախտում է կրկին դատապարտվելու անթույլատրելիության սկզբունքը<sup>3</sup>, 4. խախտում է արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը<sup>4</sup>, 5. կասկածի տակ է դնում իրավական որոշակիության սկզբունքը և այլն<sup>5</sup>:

Այսպիսով, օրենսդրական բարեփոխումներով քրեական օրենսդրության մեջ որպես հանցագործությունների բազմակիության տեսակներ մնացին հանցագործությունների համակցությունը և ռեցիդիվը, ինչը, մեր կարծիքով, հիմնավորված է և թույլ է տալիս ապահովելու արդարության սկզբունքի իրագործումը:

<sup>1</sup> Տե՛ս **Иванов В. А.** Рецидив преступлений: Уголовно-правовые и криминологические аспекты: дис., канд.юрид.наук., Омск, 2002, էջ 9:

<sup>2</sup> Տե՛ս **Жевлаков Э.** Обновленное уголовное законодательство и проблемы его применения // Уголовное право. 2004. № 3. էջ 29:

<sup>3</sup> Տե՛ս **Козлов А. В.** Ответственность за совокупность преступлений: дис., канд.юрид.наук. М., 2006, էջ 8:

<sup>4</sup> Гаврилов Б.Я. Современная уголовная политика России: Цифры и факты. М, 2008, էջ 99

<sup>5</sup> Տե՛ս **Մարաբյան Ս.**, Հանցագործությունների կրկնակիության հարաբերակցությունը համակցության և ռեցիդիվի հետ (օրենսդրական կարգավորումների, դատական պրակտիկայի և զարգացման միտումների մասին իրավական վերլուծություն): ՀՀ դատական համակարգի պաշտոնական կայքէջ, court.am (17.11.2015)

## МНОЖЕСТВЕННОСТЬ ПРЕСТУПЛЕНИЙ И ЕЕ ФОРМЫ

Татевик Геворгян

*преподаватель кафедры права АргУ*

---

Совершение одним лицом нескольких преступлений требует от государства особого к себе отношения, поскольку с каждым новым преступлением растет вред, причиняемый данным лицом обществу. Необходимость противодействия таким преступным проявлениям обуславливает научную и практическую разработку понятия множественности преступлений и понятия совокупности преступлений как одной из ее форм.

## MULTIPLICITY OF OFFENCES AND ITS FORMS

Tatevik Gevorgyan

*Lecturer at the Law Chair of Artsakh State University*

---

To tackle multiple crimes perpetrated by one person requires a different approach by the government, because the damage caused to society by the person increases with each new crime. The necessity to combat such criminal manifestations determines the scientific and practical development of the concept of multiple offences and the concept of cumulative offences as one of its forms.

**Բանալի բառեր** - *հանցագործությունների բազմակիություն, հանցագործությունների համակցություն, կրկնակիություն, ռեցիդիվ, քրեական օրենսդրություն, միևնույն անձի կողմից երկու և ավելի հանցանք կատարելը*

**Ключевые слова:** *множественность преступлений, совокупность преступлений, повторность, рецидив, уголовное законодательство, совершение лицом двух или более преступлений*

**Key words:** *multiple offences, cumulative offences, repetition of crimes, recidivism, criminal legislation, commission of two or more crimes by a person*